№ 237 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 27 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

1915
ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 27 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ № 237

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 բուբլի։
Առանձին համարները ՍՄԵՆ ՏԵՂ, 6 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Բայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Բայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Ցպարանի տելեֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».

TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 2 ՐՈՒԲԼԻ

Բաժանորդագրութիւն ընդունվում է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակագրոշմ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խընդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Բայտարարութիւնների համար պէտք վճարել՝ I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպէկ։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Պատերազմից Վնասվածներին Օգնող Կովկասեան Գլխաւոր Կոմիտէտը սրանով յայտարարում է, որ Թիֆլիսի Աշխատանքի Բօրսային կից՝ փախստականներին աշխատանք մատակարարող բաժանմունքում ստացված են յայտարարութիւններ փախստականներից հետևեալ աշխատանքների համար.

Դրասենեկապետներ և հաշուապահներ՝ 9 հոգի, ուսուցիչներ՝ 3, մեքենագործներ՝ 1, գործակատարներ՝ 6, դռնապաններ և պահապաններ՝ 38, սպասաւորներ և շվեյցարներ՝ 2, կօշկակարներ՝ 4, փականագործներ՝ 1, խոհարարներ՝ 2, պատանի-ծառաներ՝ 1, դանձապահուհիներ՝ 1, վաճառուհիներ՝ 2, վարժուհիներ՝ 1, աղախիններ՝ 3, գործակատարուհիներ՝ 2։

Այն անձերը, որոնք կը կամենան վերոյիշեալ աշխատանքների համար վարձել փախստականներին, Կովկասեան Գլխաւոր Կոմիտէտը առաջարկում է դիմում անել Քաղաքային Աշխատանքի Բօրսային (Վերայի զառիվայր) փախստականներին աշխատանք մատակարարող բաժանմունքին։ առ. 774. 1—1

Կովկ. Հայոց Բարեգ. Ընկ. Գօրու վիճակի ՔԱՀՈՒՐԵԼ ԳԻՒՂԻ դպրոցի համար, օրին նը-պաստում է ինժենէր Միքայէլ Գր. Ալիբէգեանը, հարկաւոր են

ԵՐԿՈՒ ԴԱՍԱՏՈՒՆԵՐ,

մէկ աւագ ուսուցիչ 450 ր. ռոճիկով, իսկ միւսին 400 ր.։ Մէկը պէտք է իմանայ վրացերէն լեզուն։ Ցանկացողները պէտք է դիմեն Ընկերութեան գրասենեակ՝ Արաս-Արաբեան հրապարակ № 7.

Հարկաւոր են նոյնպէս մի հմուտ ՀԱՇԻԱՊԱՀ և մի ՔԱՐՏՈՒՂԱՐ գաղթականների գործերի համար։ Դիմել նոյն տեղ։ առ. 776. 2—1

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊ. ԴԱՀԼԻՃՈՒՄ
(Գրիբոյեդովսկայա, 8)
Կիրակի, նոյեմբերի 1-ին, կը կայանայ հայերէն լեզուով

ԵՐԿՈՒ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

1) Օր. ՎԱՐԴՈՒՀԻ ՍԵԴՐԱԿԵԱՆ ԹՈՒԱՅԵԱՆՑ— ԶԷՖՈՎԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆը

(Նրա տարեշրջանը, նա որպէս ստեղծագործող, հոգիան, գեղագէտ, դրամատուրգ, և որպէս ճշմարտութեան, բարութեան ու սիրոյ իդէալների հետևող)։

2) Փիլիս.-դօկտոր ՍԵԴՐԱԿ ԹՈՒԱՅԵԱՆՑ— ՄԽԻԹԱՐԱԿԱՆ ԽՕՍՔ ՎԵՑՏԱՒԱՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ

1) Պէտք չէ յուսահատվել։ 2) Վերածնութեան ճանապարհը—ա) Ընտանիք. բ) Դպրոց, գ) Ինքնակրթութիւն, դ) Մամուլ ու գրականութիւն, ե) Թատրոն և զ) Պատերազմ ու ազնիւ աշխատանք։

Տեղերի գները 20 կոպ. մինչև 1 բուբլի։ —◆— Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին։

Տոմսակները ծախվում են՝ 1) «Գուստենբերգ» գրավաճառանոցում (Երևանեան հրապարակ), 2) Գրավաճառանոց „Просвѣщеніе“, Կուրի տակ, 3) Կարնարան «Կաֆէ-Ցէնտրալ» (դուքանի տակ), 4) Երաժշտական դպրոցի շվեյցարի մօտ ու. 5) Դասախօսութեան օրը դահլիճի մուտքում։ առ. (Ն. 2. կ.) 773. 4—1

Թերլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈՍՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԵՎՄՈԹՈՐԱԿՈՎ։ Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և յուսանկարները լուսաւորված ԹՆՏԴԻՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ։ Ամեն օր՝ 9—1 ժամ. ցեր. և 5—7 ժամ. երեկոյեան։ ՀՐԱՒՈՐՆԵՐԻՆ առ. ժ. 9—10 ՀՐԻ։ Бебутовская, 23. тел. 7-29։
առ. (ա. օ.) 504. 100—72

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ ԵՒ ԼԱԲՕՐԱՏՕՐԻԱ
ԿԷՕՆՃԵԱՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ

Պլօմբ—ոսկուց, արծաթից, ֆարֆորից և այլն։ Ատամի հեռացումը առանց ցաւի։ Արհեստական ատամներ ոսկուց (առանց բիմբի) և կաուչուկից՝ կատարելագործված մեթոդով։
Ընդուն. 10—2 առաւ. 4—7 երեկ. Լերմօնտովսկայա փողոց № 1. Մուտքը պէրէուլկից։
(ա. օ.) առ. 515. 100—57

ԲԺԻՇԿ
Շուշանիկ Նարարեան
(Մանուածք կանանց հիւանդութիւնների եւ մանկաբարձութեան)
Վերադառնալով հանքային ջրերից՝ վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը։
Ընդունում է ամեն օր՝ (առ. ժ. 1—2. (եր. ժ. 4—6.
Հասցէն՝ Սօլոլակ, Բոլշէվիսկայա փ. № 1. Հեռախօս 10—58.
(Ե.Հ.Կ.) առ. 634. 100—19

Թիֆլիսի կոյրերի Հոգաբարձութեան Ակնաբուժարանի աւագ օրդինատոր
ԲԺՇԿՈՒՀԻ
ՍՕՖԻԱ ՄԻՐԶՈՅԵԱՆ
ընդունում է աչքի հիւանդութիւններից ամեն օր՝ ցեր. ժամը 1½-ից մինչև ժամը 3-ը։ Սերգիէվսկայա փող. № 1. Տելեֆոն № 16—67։
առ. 753. 50—6

ՊԱՐՏԱԴԻՐ ՈՐՈՇՈՒՄՆ

Կովկասեան երկրի և Ստաւրօպոլի նահանգի բոլոր նահանգների և շրջանների վերաբերեալ, որոնք գտնվում են զինւոր. դրութեան մէջ, հրատարակված կովկասեան զինւոր. շրջանի գլխաւոր պետի կողմից, համաձայն Общ. Укр. Губ. II հատորի 23-րդ յօդուածին կցված յաւելուածի 18-րդ և 19 րդ յօդուածների։

1) Արգելվում է վաճառել կովկասեան հապալասու (брусничный) տերևներ նրանց, որոնք այդ մասին չունեն պատշաճ իրաւունք։

2) Արգելվում է կովկասեան հապալասու տերևների համար գործադրել այնպիսի փաթեթներ և բանդէրոլներ, որոնք յատակացված են իսկական թէյի համար, նոյնպէս և գործադրել ֆինանսների մինիստրութեան օրգանների հսկողութեանները գտնվող փոքրիկ փաթեթներ։

3) Արգելվում է կովկասեան հապալասու տերևների փաթեթների վրա անել այնպիսի մակագրութիւններ, որոնք կարող են թիւրիմացութեան մէջ ձգել գնողներին, և խոշոր տառերով տպել, որ փաթեթը թէյ է պարունակում, իսկ մեծերի անունը՝ «Кавказскій брусничный листъ» տպել մանր, հազիւ նկատվող տառերով, և այն էլ կրճատ։

4) Ներկայ պարտադիր որոշումը խախտելու դէպքում մեղաւորները, համաձայն Օրէնսգրքի II հատորի 23-րդ յօդ.-ին կցված յաւելուածի 19-րդ յօդուածի 2-րդ կէտի, կենթարկվեն ադմինիստրատիվ կերպով մինչև 3000 բուբլի տուգանքի կամ մինչև 3 ամիս բանտարկութեան։ Ցիշեալ պատիժը գործադրելու համար, համաձայն վերոյիշեալ յաւելուածի 19-րդ յօդուածի 3-րդ կէտի, իմ կողմից լիազօրված են ժամանակաւոր գեներալ-նահանգապետները, նահանգապետները, առանձին շրջանների կառավարիչները և Բաքուի քաղաքապետը։

Ներկայ պարտադիր որոշումը գործադրութեան մէջ է մտնում հրատարակութեան օրից։

Ստորագրեց՝ գեներալ-լեյտենանտ Վոլսկի

7 հոկտեմբ. 1915 թ. Թիֆլիս։

առ. 775. 1—1

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

25 հոկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Սև-ծովի ափային շրջանում թիւրքերը փորձեցին անցնել Արխավէ գետը, բայց վանվեցին։

Թորթումի շրջանում, Խիստափոր գիւղից դէպի հիւսիս և Ալաշկերտի հովտից դէպի արևմուտք ընկած շրջանում՝ Զօրով գիւղի մօտ՝ ընդհարումներ են առաջացած զօրախմբերի միջև։

Վանի լճի հարաւային ափում՝ Շատախ գիւղի շրջանում ընդհարումներ են քիւրդերի հետ։

ԼՕՆԴՕՆ.—Մէջերկրական ծովի արշաւազօրի հրամանատարը տեղեկացնում է, որ հոկտ. 22-ին, երեկ. ժամը 9-ին, թիւրքերը չորս անգամ յարձակում գործեցին Անզակի մօտ բրիտանական աջ զօրաթևի վրա։ Թշնամին առաջացաւ ուժգով լի տարբակներով և ճանապարհին պատնէշներ կառուցանելով։ Սակայն թշնամին վանվեց։ Բրիտանացիների կորուստներն աննշան են։

ԲՈՒԽԱՐԷՍՏ.— Կ. Պոլսից տեղեկացնում են, որ Մարմարա ծովում սուզանաւերը մինչև օրս ջրասուզել են 50 թիւրքական նաւ։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

23—25 հոկտեմբերի

ՊԱՐԻԶ.—Զը նայած կատաղի ռմբակոծութեան, բուլգարներին չաջողվեց գրաւել Կրիվոլակի մօտի մեր ամրութիւնը։ Միևնոյն օրը մենք տիրեցինք Բաբրօվոյից դէպի արևելք երկու գիւղ։ Բուլգարները կատաղի ռմբակոծութեան ենթարկեցին Վալանդովոն։ Բաբրօվոյից դէպի հիւսիս սկըսված կռիւը շարունակվում է։

ԲՈՒԽԱՐԵՍՏ.—Լրագիրները հաղորդում են, որ դաշնակից նաւատորմի ռազմանաւերը շարունակ լողում են Դէդէաղաչի մօտ, ոչ հեռու բուլգարական ափից, որը ժամանակ առ ժամանակ ենթարկվում է ռմբակոծութեան։ Ամբողջ քաղաքացի ազգաբնակութիւնը հեռացել է երկրի ներսը։

ՊԱՐԻԶ.—Կրիվոլակի մօտ մեր առաջադիր զօրաջոկերի վրա հանդուգն թիւրք էրացլանա զօրաջոկատի վրա սչինչ խոշոր դէպք չեղաւ։ Բաբրօվոյի կողմից մեր առաջխաղացումը շարունակվում է։

ԵՒՐՕՊԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

24 հոկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Բրիգայից դէպի արևմուտք, Ուշին գիւղի շրջանում մենք վանեցինք գերմանական մի քանի յարձակումներ։ Գերմանացիների հակայարձակումները Սվենտէն լճից դէպի հարաւ շարունակվում են։ Պրիպեատայից դէպի հարաւ փոփոխութիւն չը կայ։

Լրացուցիչ տեղեկութիւնների համաձայն, Կոստիխովկա գիւղի մօտ տեղի ունեցած կռւի մէջ մենք հոկտ. 22-ին վերցրել ենք գերի 22 օֆիցէր և 712 զինւոր, ձեռք ենք ձգել 7 գնդակացիր և 2 թնդանօթ։ Բուդկի գիւղի կողմից թշնամու յարձակումները վանվեցին։ Թշնամին անկարգ ետ մղվեց դէպի իր խրամատները։

Սէմիկովցէ գիւղի շրջանում և Իշկուվի լճի արևմտեան ափում կատաղի կռիւների շրջանն անցաւ։ Սարիպի գետի մօտ տեղի ունեցած վերջին կռւից յետոյ մենք գերեցինք 8500-ից աւելի զինւոր։ Թշնամու սոսկալի կրակի տակ մեր զօրքերը դիմադրեցին բոլոր յարձակումներին և իրանց թընդանօթային մրրկային կրակով հնարաւորութիւն տուին գերիներին և պատերազմական հարուստ աւարը անցկացնել Սարիպի ափը։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Բրիգայի զօրաճակատի վրա մեր զօրքերը աջող յարձակում գործեցին գերմանացիների վրա Սլայ գիւղի մօտ՝ Բրիգայից դէպի հարաւ-արևմուտք։ Հակառակորդը ստիպված էր ժամանակաւորապէս հեռանալ այդ կէտից։

Դիենայի ձախ ափին Լաուբ գիւղի մօտի գերեզմանոցը մենք վերցրինք։ Միևնոյն շրջանում Պիլվերօյի մօտ գերմանացիք ցիրուցան եղան։

Սվինտէն լճի արևմտեան ափում գերմանական խրամատների երկրորդ շարքը վերցնելիս մենք գերեցինք աւելի քան 300 զինւոր, ձեռք ձգեցինք 2 գնդակացիր և մի պրոժեկտօր։ Դրանից յետոյ գերմանացիք գործեցին 4 հակայարձակում, բայց աջողութիւն չունեցան։

Ստիրիի ձախ ափին հակառակորդը յարձակում գործեց Մեդվէժիէ գիւղի շրջանում, բայց յարձակումը վանվեց։

Հոկտ. 22-ին մեր վերցրած Կոստիւխովկա գիւղի արևմտեան կողմում կռիւները շարունակվում են։

ՊԱՐԻԶ.—Պաշտօնական ցերեկվայ հաղորդագրութիւն։

Սոմմայի և Ուազի միջև մենք ձեռք ձգեցինք գերմանական մի պահակագիրք։ Անտէշի դիմաց և մրրկային կրակով դադարեցրինք թշնամու խրամատային թնդանօթների գործունէութիւնը։ Վէրդէն շրջանում։ Շամպանիում մենք վանեցինք գերմանացիների յարձակումը։ Վօգէզներում կռիւները շարունակվեցին։ Գերմանացի օդաչուները 8 ռումբ նետեցին Դիւնկէրկի շրջանում, ուր նիթական վնասներն աննշան են, վիրաւորվել է մի երեխայ։

ԼՕՆԴՕՆ.—Լլոյդը տեղեկացնում է, որ անգլիական «Ուդֆիլդ» շոգենաւը ջրասուզվել է։

ՀՌՕՄ.—Գլխաւոր բանակից յայտնում են, որ մեր զօրքերի աջող գործողութիւնները շարունակվում են։

ՊԱՐԻԶ.—Պաշտօնական հաղորդագրութիւն։

Շամպանիում գիշերը գերմանացիք նորից յարձակում գործեցին մեր խրամատների և Լակուրտիի դաշտային ամրութիւնների դէմ. յարձակումը վանվեց։ Արգոնների և Մասսի միջև, ուր ականային կռիւը շարունակվում է անընդհատ, մեր ականների պայթումից սաստիկ տուժեցին թշնամու դաշտային ամրութիւնները Մէլանկուր շրջանում։

Լօսսում շարունակվում են թնդանօթային կռիւներ։

ՀԱԻՐ.—Թշնամին կատաղի ռմբակոծութիւնը շարունակում է մի քանի ռազմավայրում։ Մեր թնդանօթները եռանդով պատասխանում են։

ՀՌՕՄ.—Գլխաւոր բանակը յայտնում է, թէ մեր թնդանօթները և հետիոտն զօրագնդերը գործում են եռանդով։ Եղանակը վատ է։

ԼՕՆԴՕՆ. — Ֆէրդմարշալ Ֆրէնչը տեղեկացնում է. «Երեկ տեղի ունեցան հինգ ընդհարում օդում։ Գերմանական մի աէրոպլան ընկաւ մեր զօրագիրքերի մօտ։ Հոկտ. 19-ից յօդ անձրևներ են։ Ականային կռիւները շարունակվում են»։

ՊԱՐԻԶ. — Ծովային մինիստրութիւնը յայտնում է, որ թշնամու սուզանաւերը, որոնք հաւանօրէն եկել էին լոյս հոկտ. 21-ի գիշերը ովկիանոսից Զիբրալտարի նեղուցը, ջրասուզեցին հոկտ. 22-ին Արդէի մօտ ֆրանսիական «Դարտ» և «Կալվադօս» շոգենաւերը և իտալական «Իոնիո» նաւը, «Դարտ» և «Իոնիոյ» նաւաստիներն ազատվել են։

ԼՕՆԴՕՆ.—Բրիտանական «Բամազան» շոգենաւը ջրասուզվել է գերմանական սուզանաւից Եգէյեան ծովում. 380 զինւորից ազատվել են 75-ը և նաւաստիները։

ԱԼԺԻՐ.— Գերմանական մի սուզանաւ ջրասուզեց Ալժիրից 40 մղոն հեռաւորութեան վրա ֆրանսիական «Սիդէէբիա» շոգենաւը. նաւաստիները ազատվել են։

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԾՈՒՐԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

24 հոկտեմբերի

ԼՕՆԴՕՆ. — Կիտչենէրի բացակայութեան ժամանակ զինւորական մինիստրութիւնը կառավարելու է Ասկվիտը։ Սխալ է, թէ Կիտչենէրը հրաժարական է տուել։

ՀՌՕՄ.—Հռոմի պարլամենտական և դիւանագիտական շրջաններում հետաքրքիր են Լիւցէրնից ստացվող տեղեկութիւններին, ուր ներկայումս գտնվում է Բիւլովը. իտալացի քաղաքական գործիչները համոզված են, որ Բիւլովի Շվեյցարիա այցելելու նպատակն է՝ ստեղծել փոխադարձ անվստահութեան մթնոլորտ՝ համաձայնութեան պետութիւնների միջև։ Կարծում են, որ Բիւլովը նպատակ ունի պարարտել չէզոք երկիրների հասարակական կարծիքը ապագայ հաշտութեան համար։

ՍՏՕԿՀՕԼՄ.—Բոստէրդամից հաղորդում են. «Հակառակ «Նօրդ - Դոյչէ - Ցայտունգի» այտարարութիւններին, թէ ոչ մի բանակցութիւն հաշտութեան մասին ըէյխստագի պատգամաւորները չեն վարել, հօլլանդական պաշտօնական հեռագրական գործակալութիւնը ճշդում է, որ այդ տեսակ բանակցութիւններ տեղի են ունեցել Ամստէրդամում գերմանական ըէյխստագի պատգամաւորների և հօլլանդական կառավարութեան ներկայացուցիչների միջև։ Բանակցութիւններին մասնակցում էր սոցիալիստ-պատգամաւոր Էրզմանը»։

Բերլինից հաղորդում են, որ «Ֆօրվէրտսը» պահանջում է, որպէս զի գերմանական կառավարութիւնը հաշտութեան պայմանների նկատմամբ ընդհանուր ֆրազներից ձեռնարկէ մշակելու դրական ծրագիր կամ թէ թոյլ տայ հասարակութեանը քննել այդ պայմանները։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Մինիստրների խորհուրդը յատկացրեց 16½ միլիոն բուբլի Ամուրի երկաթուղու արևելեան մասի կառուցման աշխատանքներն աւարտելու համար։

ՅԱՐՍԿՕԷ-ՍԵԼՕ. — Ֆրանսիական զինւորական միսսիան բաղդ ունեցաւ ներկայանալ Թագաւոր Կայսրին առաջիկայ մեկնման առիթով։

ՍՏՕԿՀՕԼՄ.—Բերլինից տեղեկացնում են, որ այնտեղ է եկել բուլգարական ֆինանսների մինիստր Տօնչէվը։

Նոյեմբերի 2-ից Բերլինում կաթը բաց է թողնվելու միայն կանանց, երեխաներին և հիւանդներին։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ.—«Նացիոնալ - Տիդէնդէն» մատնանշում է, որ եթէ Յունաստանը կամենում է իրականացնել մեծն Ելլադայի երազանքը, նա պէտք է միանայ քառակ համաձայնութեանը։

Կառավարութիւնը տեղեկութիւն առաւ, որ Դանիական Վէստ-Ինդիայի սեպհականութիւնների ապատամբութեան վտանգն անցել է։

ՊԱՐԻԶ.—Արտաքին գործերի սենատորական մասնաժողովի մէջ ընտրվեցին նախագահ՝ Կլէմանսօ, անդամներ Պիշոն, Դեսէլիէվ, Մօնիս, Ժօնար, Դեվէլ և Սարիէն։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—1916 թ. եղանաւոր օրէնսդրական հաստատութիւններին կը ներկայվի նոյեմբերի սկիզբներից ոչ ուշ։

ՄԻՆՍԿ.—Պատերազմի 15 ամիսների ընթացքում Մինսկի նահանգով անց են կացրել աւստրիացի և գերմանացի գերիներ 3245 օֆիցէր և 210,027 զինւոր։

ՍՏՕԿՀՕԼՄ. — Գերմանիայում կենսական մթերքների թանգութեան պատճառով կենսական սոցիալ-դեմօկրատական կոմիտէտը բողոքից դրա դէմ և ապացուցանում է, թէ անհրաժեշտ է ընդհանուր արգելք դնել կենսական մթերքների վրա և բաժանել նրանց հաւասար բաժիններով ազգաբնակութեան մէջ։

Բելգիայի անտեսական դրութիւնը յուսահատական է։ Զը նայած մահվան վտանգին, շատ բելգիացիներ փախչում են Հոլանդիա։

ԼՕՆԴՕՆ.—«Պրէս-Բիւրօն» յայտնում է, որ իր կօլէգների խնդիրքով Կիտչենէրը մեկնել է արևելեան պատերազմաբեմ այցելելու համար։

ԲՈՒԽԱՐԵՍՏ.—Պաշտօնապէս հաղորդվում է, որ Բուլգարիայի հանդէս գալու և Սօլունի գծով հաղորդակցութիւնը կանգ առնելու պատճառով Ֆրանսիայից, Իտալիայից և Անգլիայից ստացվող ապրանքները ներկայումս այլևս Բուխարեստ չեն մտնում։ Հասարակական աշխատանքների մինիստրը զբաղված է այն հարցով, որպէսզի այդ ապրանքները ստացվեն Անգլիայի, Նորվեգիայի, Շվեդիայի և Ռուսաստանի վրայով։ Այդ նպատակով առանձին մասնաժողով է մեկնում Ռուսաստան։

ՆՈՐ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆ ՅՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

25 հոկտեմբերի

ԱԹԷՆՔ.—(Ճեպընթաց)։ Մինիստրական ճգնաժամը վերջացաւ։

Նախկին մինիստր Սկուլուդիսը կազմեց նոր կաբինէտ, որն այսօր երդում տուեց։ Բոլոր նախկին մինիստրները պահում են իրանց պօրտֆէյները։

Սկուլուդիսը ստանձնեց արտաքին գործերի մինիստրի պաշտօնը։

Նոր կաբինէտը ներկայանալու է պատգամաւորների պալատին։ Եթէ վերջինս չաջակցէ նրան, կարձակվի։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեր. Գործ.)

24 հոկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Խարկովի համալսարանի պրոֆէսոր Լամիկովսկին նշանակվել է Կազանի ուսումնարանական շրջանի հոգաբարձու։

Կովկասի Փոխարքայի խորհրդի անդամ Զուսկովսկին հրամայված է ներկայ լինել սենատում։

ՏՈԿԻՕ.—Կայսրը առ. ժամը 6-ին կառավարութեան բարձրատիճան պաշտօնեաների և զինուորական շքախմբի ուղեկցութեամբ մեկնեց Կիսաո՝ թագաւորութեան հանդէսներին։ Կայսրին հրաժեշտ տալու համար ժողովվել էին առ. ժամը 4-ին 40 հազար դպրոցական, 20,000 զինուոր, կառավարական հաստատութիւնների ներկայացուցիչներ և մի քանի հարիւր հազար մարդ։

ԹԷՀՐԱՆ.—Շահը ամարային պաշտօնավայրից փոխադրվեց մայրաքաղաք։ Կարծում են, որ շահի գալուստը մի փոքր հանգստութիւն կը ձգէ օտարերկրեայ գաղութի մէջ, որ յուզված է այն լուրերից, թէ մը-տադրութիւն կայ յարձակվել միսսիոնների վրա։

ԼՕՆԴՕՆ.—Թագաւորի առողջական դրութիւնը բարելավում է, բայց որոշ ժամանակ թագաւորը չէ կարող սենեակից դուրս գալ։ Բիլլրոտների հրատարակութիւնը ընդհատվեց։

ՏՈԿԻՕ.—Հաղորդում են, որ Խէնան նահանգում յեղափոխականներն անկարգութիւններ են կազմակերպում միապետութիւնը վերականգնելու նախագծի առիթով։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՒ.— Կամենակի գիւղում ոստիկանութեան հետ ունեցած հրացանաձգութեան մէջ սպանվեց մի անյայտ մարդ, որի մօտ գտնվեցին դրամ, զէնք և 100 փամփուշտ։ Կարծում են, որ սպանվածը յայտնի աւազակապետ Ժուրավսկին է։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

✦ «Բ. Բ.»-ին հեռագրում են, որ Պետրոգրադի սերբական միսսիայի տասցած տեղեկութիւնների համաձայն՝ բոլգարները սերբերի և ֆրանսիացիների դէմ ունեցած կռիւների մէջ կորցրել են ոչ պակաս՝ քան 100,000 մարդ։

✦ «Յ. Բ.»-ն հաղորդում է, որ բոլգարները գրաւել են Կնեժէվացը և խլել են սերբերից 5 թնդանօթ։

✦ «Բ. Բ.»-ին հեռագրում են Աթէնքից. «Ստացվել են յուզիչ տեղեկութիւններ Սերբիայի մասին։ Սերբը զօրքը նահանջում է հեռանդվելով հիւսիսից և արևելքից»։

✦ Բաղօսլավիի օրգանը գրում է, որ բոլգարները և գերմանացիք, միմեանց ձեռք տալով, ստեղծեցին ընդարձակ զօրաճակատ սկսած Բիգայի ծոցից մինչև Պարսից ծոցը։

✦ Գերմանական ըէյխստագը գումարվելու է նոյեմբ. 17-ին։ Սոցիալիստ պատգամաւորները հարցանդում են ներկայացնելու ապրուստի թանգութեան, հաշտութեան հարցի և ներքին քաղաքանութեան մասին։

✦ Պետական Դուման գումարվելում է նոյեմբերի սկիզբներին։ Սպասվում են մի շարք հարցանդումներ կառավարութեանը ուղղված։

✦ Վենիզէլոսը ասել է ամերիկեան թերթերից մինի թղթակցին. «Եթէ ես նորից իշխանութեան գլուխ կանգնեմ, անմիջապէս պատերազմ կը յայտարարեմ Բոլգարիային»։

✦ Բումինիայի երկդիմի դերը դեռ անորոշ է մնում։

✦ Շուտով համաշխարհային պատերազմին մասնակցելու են Շվէդիան, Դանիան և Նորվէգիան։

✦ Կրիվոլակ-Սարու

օշնչական ցրտից, քաղցից, սննդեան և հագուստեղէնի կատարեալ բացակայութիւնից, թողնելով օգնողներին տանջվել խղճահարութիւնից, եթէ միայն դրութիւնը չը փոխվի։ Շրջել եմ վիճակիս լեռնային մասի բոլոր գիւղերը, որոնք ունեն և որոնք ստացել են գաղթականներ. ամենայն տեղ էլ պակասում է նախ՝ կազմակերպութիւնը, որոշեալ ուղղութիւնը օգնութեան գործի մէջ. երկրորդ՝ օրերով ուշանում է նոյնիսկ հանապազօրեայ 2 ֆունտ սահմանված հացը կամ ալիւրը, և գիւղացիք տալիս են փոխարինաբար հաց կամ ալիւր, մինչև քաղաքից կը ստացվի ալիւրը, որի ուշանալու և ապա գիւղացիների չքաւորութեան շնորհիւ օրական մի ֆունտ հացով իւրաքանչիւր գաղթական բաւականացել է։ Մի գիւղում երեկոյեան միայն տուին հաւաքած հացայնքան աննշան չափով, որ շատերը հրաժարվեցին ընդունելուց՝ քչութեան պատճառով։ Երրորդ՝ շրջեղէնի կատարեալ բացակայութիւն. այն շորերը, որոնք հագին ունեն, բոլորովին օշնչացնելու է և նորերը տալու, որպէսզի հիւանդութիւնների առաջը առնվի և ցրտից չը մեռնեն. և այս շորերը չը պէտք է պատռատել և ուղարկել, որպէսզի գարնանը հասնեն, այլ միայն կը-տորներ պիտի ուղարկել գիւղերը և բաժանել տեղի, թելի հետ։ Իրանք կը կարեն հարկաւոր շորեղէնը։ Առաւելապէս ուղարկելու է վերմակների և դշոյների համար կտորներ։ Ոռնամանները չունեն. տարաց են ման գալիս համարեա թէ բոլորը, փոխ առ փոխ տաները գեանից բարձրացնելով, որպէսզի մէկը միայն մրսի, և իրանց մարմինը տաքացնում են՝ փալասների տակ գլուխները պահելով և այնտեղ շնչելով։ Եւ այս դրութեան մէջ՝ կրակը, տաքութիւնը նրանց տենչալի առարկան է։ Զորքերի՝ տան համար անհրաժեշտ կահ-կարասիք, փայտէներ, գազներ, կերակուր եփելու ամաններ, լամպաներ չը կայ։ Գիւղացիք չունեն, որ հոգան այս պակասութիւնները։ Հինգերորդ՝ վառելիքի պակասութիւնը հաւասարապէս յիշածս կարիքների՝ զգալի է խնայու և ցուրտ բնակարաններում, որտեղ գաղթականները հողէ յատակի վրա ցերեկները նստած են մրսելով, գիշերները անքուն դողդողում են ձորձերի կամ դէն ձգվելու արժանի փուռածքի վրա, կմաղքացած երեխաներին իրանց շնչերով տաքացնելով։ Մի քանի գիւղերում յատկացված են և այնպիսի բնակարաններ, որտեղ անասուններն իսկ դժուարութեամբ կը համաձայնեն ապրել։ Լսվում է, որ պետական անասուններից ձրիաբար վառելափայտ թողնելու թոյլատրութիւն արարդէն արձակվել է. եթէ ճիշդ էլ լինի այս, դա միմիայն օգուտ է այդ անասունների մօտ բնակվող գաղթականների համար, իսկ հեռու ապրողների դրութիւնն այս կողմից չի բարւոքվի։

Գանձակի պ. նահանգապետն այս մասին իր միջնորդութիւնը յարուցել է դեռ ևս օգոստոսի սկիզբներին պատշաճաւոր տեսչութեան առաջ և ապա այն կրկնել և ներկայացնել։ Սակայն հաստատ թոյլատրութիւնը անյայտ է։ Վերերորդ՝ բժշկական օգնութիւնը, որը կեանքեր կը փրկէր, բոլորովին չը կայ տեսածս գիւղերում, և նրա պակասութիւնը զգալի է ոչ միայն գաղթականների, որոնք այդ պակասութեան շնորհիւ մնանում են, այլ և տեղական բնակչութեան։

Այսպիսի պայմանների մէջ միանգամայն աւելորդ շռայլութիւն է համարվում մաքրութիւնը, կեանքը երկարացնելու զգացումը, և գաղթականները ամենայն իրաւամբ անիծում են այն օրը, երբ իրանք յօժարել են թողնելու իրանց նախկին բնակավայրերի սահմանները և գալու այս տեղերը, ասելով որ այնտեղի մահը մի անգամ էր և վախճանական։ Եւ առաւել սոսկալին ու յուսահատականն այն է, որ տեսնում ես այս բոլորը և հնարաւորութիւն չունես օգնելու։ Բոլոր տեսածս գիւղերումն էլ յիշածս պայմանները, որոնց ենթակայ են գաղթականները, աննշան բացառութեամբ միևնոյն են։ Միակ գիւղը, որը իսկապէս հարկաւորին պէս պահում է գաղթականներին և առ այս էլ ունի հնարաւորութիւն, է Նիւզարը։

Այս ամենը, կազմակերպութեան և մտածված որոշեալ ուղղութեամբ օգնելու բացակայութիւնը նկատելով և լսելով, որ Քաղաքների Միութիւնը որոշել է ախտահանիչ կայան հիմնել Զարդախլուում, Գետաբէգում և Անենֆելդում, կարևոր համարեցի դիմելու Ալ. Խատիսեանին, կարծիք յայտնելով որ, նախ, այս բանը հիմնվի գաղթականների համար նաև Բարսում կամ Գառնակեր գիւղում՝ այս երկու գիւղերի և Նիւզարի համար. նոյն բարութիւնը հաստատել Խաչկաստում կամ Բանանցում։

Երկրորդ, ի նկատի առնելով որ Քաղաքների Միութեան Գետաբէգի և Անենֆելդի հիւանդանոցներից, ճանապարհների վատութեան, տեղ-տեղ էլ կատարեալ բացակայութեան և հեռաւորութեան շնորհիւ, շրջակայքի հայ գիւղերի արդէն տեղաւորված մօտ 1700 հոգի գաղթականները ոչ մի հնարաւորութիւն չունեն օգտվելու, խնդրեցի, ցոյց տալով յարմարութիւնները, 15 մահճակալ Գետաբէգի հիւանդանոցից, որը զորձարանի շնորհիւ անհամեմատ լաւ պայմաններ ունի, փոխադրել Զարդախլու գիւղը՝ Զարդախլուի (450 գաղթական), Բաղքենդի (152), Շագիրի, (217) համար. նոյն հիւանդանոցից փոխադրել 15 մահճակալ Բարսում գիւղը՝ Բարսումի մօտ 400, Գառնակերի 232, Նիւզարի 123 գաղթականների համար։ Ծայրայեղ դէպքում, Գետաբէգի և Ղազախլիի հիւանդները ազատ կարող են օգտվել Զարդախլուի հիւանդանոցից, որովհետև երեքն էլ ընկած են շոսէի վրա և չափազանց դիւրին է յարաբերութիւնը։ Իսկ Անենֆելդի հիւանդանոցից, որը ժամանակաւոր ընաւորութիւն ունի, պայմանաւորված լինելով գաղթականական հոսանքի և պակաղ հիւանդների առողջանալու հետ, 20 մահճակալ փոխադրել Բանանց գիւղը՝ Խաչկապի, Զովդառի, Քարհատի, Գիրանցի և Բանանցի համար։ Թէև այս գիւղերում գաղթականները քիչ են առ այժմ, իսկ Փիրք և Զովդառ գիւղերը չունեն գաղթականներ, սակայն գաղթականների թիւը առաջիններում կաւելանայ 364 հոգի, երկրորդներում կը բնակվեն, ինչպէս որոշված է, 700 հոգի. ես ինչպէս իմացայ, Բանանց ևս ուղարկված է առ այժմ 300 հոգի։ Այս լեռնային 12 գիւղերում որոշված է բնակեցնել 3000 հոգի գաղթականներ, ուրեմն 1300 հոգի ևս կը գան այսօր-վաղը։ Այնպէս որ 2000 հոգին միանգամայն կը մնան առանց բժշկական օգնութեան, եթէ ասածս գիւղերում չը բացվեն հիւանդանոցներ։

Վիճակիս տափարակի գիւղերում որոշված է զետեղել 2625 հոգի։ Այս գիւղերում ևս անհրաժեշտ է բանալ հիւանդանոցներ։ Եթէ անհնարին լինի օգնեալ հիւանդանոցներ, այն դէպքում պէտք է կազմակերպել թաւուշիկ բժշկական խմբեր և այն էլ շատով։

Զը գիտեմ, վիճակիս միւս գիւղերում, որը լինելու հնարաւորութիւն առ այժմ չունեցայ, ի՞նչ դրութիւն է թագաւորում, սակայն հասած հաստատուն տեղեկութիւնները կասկած չեն թողնում, որ այստեղ ևս «ձայն հառաչանաց հեծութեան սրտի, աղբոց աղաղակի» հնչեցնում են գաղթականները ի լուր հայ հասարակութեան։

Տեսածներս հարևանցօրէն հրապարակելով, որ հաղորդել եմ ժամանակին Թիֆլիս և այլ տեղեր ամենայն մանրամասնութեամբ, որոնց ձեռքին է գաղթականների բաղդը և այն անօրինելու համար հարկաւոր միջոցները, հարկ եմ համարում յայտնել, որ նախ, առանց ուշացնելու պիտի հոգալ հագուստեղէնի, տանամանների, բժշկական օգնութեան մասին վիճակիս գիւղերի համար. երկրորդ՝ բանալ հիւանդանոցներ յիշածս գիւղերում, որոնք կունենան պահանջված յարմարութիւնները։

Նոյնպէս, մի ամիս առաջ խնդրված է բանալ հիւանդանոց և սննդատաւ կայան Գանձակում՝ այստեղից անցնող հազարաւոր գաղթականների համար, որովհետև տեղական միջոցները հնարաւորութիւն չեն տալիս այդ անելու և մեծ քանակութեամբ հիւանդները և թոյլերը մնում են առանց օգնութեան, գնում են գիւղերը միևնոյն դրութեամբ, որպէսզի այնտեղ ևս առանց պահանջված օգնութիւնը ստանալու մեռնեն։ Սակայն մինչև այսօր ոչինչ չը կայ, մինչդեռ սրանց գոյութիւնը շատ կեանքեր կազատէր։ Կրկնում եմ, մի շաբաթ յետոյ չափազանց ուշ կը լինի օգնութիւնը և ուշացած բարիքը չարիքի կը փոխվի՝ աւելացնելով գաղթականների գերեզմանների շարքերը հայ գիւղերում։

Ի սէր Աստուծոյ, շուտով օգնութիւն։

Օգնութեան գործով զբաղվող մարմիններին տալիս եմ հետեւեալ տեղեկութիւնները. Քարհատի 46 գաղթականներից՝ սեպտեմբերի 15—13 հոկտ. մեռել են 6 հոգի. 15-ը Չերմում են. Բարսումի մօտ 400 հոգուց մեռել են 20-ը մի ամսվայ ընթացքում. Խաչկապի 60-ից մեռել են 6-ը մի ամսվայ ընթացքում։

Լեոն վարդապետ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Գաղութիւնը Բօրչալուում

Վերին-Սարալ (Բօրչ. գաւ.). 20 հոկտ.

Ընտանի անասունների և զանազան առարկաների գողութիւնները Բօրչալուում իրանց ծայրայեղութեանն են հասել. ամեն օր ու գիշեր ընտանի անասունների գողութիւն է լինում ամեն մի գիւղում և գիւղերի հանդերում։

Վերջերս այդ գողութիւններն ընդունել են ավազակային առեւտրի ձև. ուրիշ հնարք չենք գտնում, ստիպված ենք լինում գողերից մեր ապրանքները նորից գնել. գողերին սանձահարող չը կայ. գողերը ամեն միջոց գտնում են արդարանալ և անպատիժ մնալ։ Հարկաւոր է լուրջ ուշադրութիւն դարձնել, թէ չէ՝ զրկվում ենք լծկան և կթան անասուններից։

Սադախլու կայարանում մի գործունեայ և բարեխիղճ ուրեանցի կայ՝ Նիկոլայ Գրիգորով, որ իրան յանձնված պահակախմբով օր ու գիշեր եռանդուն հսկում է կասկածաւոր ճանապարհների և կասկածաւոր մարդկանց վրա. միշտ աջողեցնում է գտնել գողացած ապրանքները և գողերին. գողերին ուղարկում է գաւառապետին, իսկ ապրանքները վերադարձնում է տէրերին։ Նա մօտ օրերումս 6 տեղ բռնեց գողացած ապրանքներ. գողերին բռնեց, իսկ ապրանքները վերադարձրեց տէրերին։ Ազգաբնակութիւնը շատ գոհ է Գրիգորովի եռանդուն գործունէութիւնից։

Յովհ. Առաքելեան

Ելախ-Շուշի ճանապարհի վրա կողոպուտ

Գօրիս, 16 հոկտ.

Երէկ Շուշուց Գօրիս եկաւ Ղափանի Նորաշէնիկի հասարակութեան տանուտէր Աստուածատուր Տէր-Մարգարեանը, որ մի քանի ընկերներով Ելախից Շուշի գալիս ենթարկվել է աւազակների յարձակման և կողոպուտի, ու պատմեց մեզ հետեւեալը.

«Ամիսս 12-ին մտանաւոր կառքով Ելախից դուրս եկանք դէպի Շուշի՝ թեւով հինգ հոգի՝ 3 հայ և 2 թուրք։ Երեկոյեան ժամը 9-ին Ղարաղաշի կայարանից մէկ վերստ դէպի Ասկերան հասած, յանկարծ կանչեցին կանգնեցնել ձիերը. թուրք կառապանը իսկոյն կանգնեցրեց կառքը. աւազակներից մէկը, որը մօտիկի հրացանով էր զինված, կանգնեց ձիերի դիմաց, իսկ երկրորդը բերդանի փողը նախ ինձ ուղղեց և փող պահանջեց. ես տուի իմ պօրտմանեան 50 ր. դրամով։ Ապա խուզարկեց ընկերոջս՝ Մարգար Տէր-Մարգարեանին, որը իր բոլոր փողը, 125 ր., ձգել էր կառքի ետեւը իրերի տակը. այդտեղ քրքրեց և այդ փողը ևս վերցրեց աւազակը։ Հերհերցի մի հայից ստացաւ 29 ր., մի թուրքից 40 ր. և մի ժամացոյց. երկրորդ թուրքը աղքատ էր, ոչինչ չունէր։

«Զը մոռանամ յիշելու, որ ինձ կողոպտելուց յետոյ՝ ծիծաղելու պատրուակով սկսեցի քանի անգամ լուցկի վառել և աւազակին լաւ դիտել, նրա դէմքը և գծագրութիւնը լաւ ճանաչելու նպատակով։

«Կողոպտելուց յետոյ հրամայեցին քշել. մենք հասանք մօտիկ կայարանը. դանգատեցինք դէպքի ատիթով ռարաժայի ուրիադնիկին և միասին բոլորս վերադարձանք ուղիղ դէպի Աղդամ՝ պրիստաւի մօտ։ Գիշերվայ ժամը 3-ին պրիստաւի պաշտօնակատար Փաշա-բէկ Զալալովի ձեռք առած միջոցների շնորհիւ՝ առաւօտեան շրջակայ գիւղերի մի շարք կասկածելի թուրքեր և 3 տանուտէրներ հաւաքվեցին Աղդամ։ Ի զարմանս մեր բոլորի և կառապանի, որը սկզբից գլուէր և ճանաչում էր աւազակներին, տեսանք կանգնած տանուտէրների մէջ մեզ կողոպտող թուրքին. ճիշդ նոյնը, որին և նկարագրել էի պրիստաւ Փաշա-բէկին. նրան բոլորս ճանաչեցինք. Աղդամի տանուտէր մաշադի Ռուստամի թոռնիկոյ Ալլահեար Ուսուբ-օղլին էր, որին և տուի պրիստաւի ձեռքը. ընկերը՝ մի աւազակաբարոյ երիտասարդ, Գուլի Դադաշ-օղլի, փախել էր։ Ռարաժայման և կողոպտուած ատիթով արձանագրութիւն կազմել տուաւ պրիստաւ Փաշա-բէկը, քննութեամբ բոլորը հաստատելուց յետոյ առաւ թոռնիկոյի Ալլահեարի հրացանը. նրան բանտ տարան, իսկ Գուլի Դադաշ-օղլին էլ պատուիրեց բռնել և իրան ուղարկել։

«Եւ այսպիսով մեզ կողոպտողը դուրս եկաւ այն անձը, որին նշանակել էին իբրև պահապան ճանապարհների ապահովութեան և անցորդների անվնաս տեղ հասնելու համար։

Դէպքի ատիթով Տէր-Մարգարեանը Շուշի հասնելուն պէս հեռագրել է պրօկուրորին և նահանգապետին։

Սաղ—եան

ԹԱՎԱՆԶԻՈՒԹԻՒՆԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՏՆԷ

Իգդիր, 16 հոկտ.

Ստիպուած ենք հրապարակաւ յայտնել, թէ, մանաւանդ վերջերս՝ արտագաղթի տաքը անակնկալէն յետոյ, կարգ մը դէպքեր եկան ապացուցանելու, թէ մեր մէջ կան չէ թէ միայն թալանչիներ, այլ թալանի զզուելի աբարքին ջատագովներ ալ։ Արտագաղթէն վերջ՝ երբ կրկին համբաները բացուեցան և շատէն քիչ ապահովութիւն հաստատուեցաւ երկրին մէջ, շատեր կրկին Վան վերադարձան, անսնցմէ ոմանք գաղթի անակնկալին առթիւ թողուցած իրենց ապրանքները կովկաս փոխադրելու կամ պահելու նպատակով, իսկ շատեր ալ ուղղակի իրենց դրբացիներու պահարանները բանելու և թալանելու համար։ Բարեբաղդաբար կային շատ մը պատուաւոր և պարկեշտ վանեցիներ ալ, որոնք ընաւ պիտի չուզէին թոյլ տալ, որ այս կարգի թալանչիներ յայտնի կերպով շարունակէին իրենց զզուելի և դատապարտելի արարքները։ Ուստի թալանչիութիւնն իսկոյն արգիլելու համար՝ ընտրեցին երկու անձէ բաղկացեալ յանձնախումբ մը և, նահանգապետ պ. Տէրմէնի յանձնարարականով, Իգդիր ուղարկեցին՝ Վանէն թալանչիներու բերած ապրանքները վար դնելու համար։ Յանձնախումբը Իգդիր հասնելով իր ունեցած յանձնարարականով յաջողեցաւ տեղական կառավարութեան օժանդակութեամբ վանեցի թալանչիներու բերած ապրանքները հսկողութեան ներքև առնելու։ Այս առթիւ սխալ հասկացողութեան բնաւ ատիթ չտալու համար յանձնախումբը յարմար տեսաւ գողցուած ապրանքներու խնդիրը կարգադրելու գործին մէջ դիմել Իգդիրի հոգեւոր կառավարութեան և Եղբայրական Օգնութեան Յանձնախումբի օժանդակութեան. ասոնք ալ քանի մը օրուան ձգձգումներէ վերջ յայտնեցին, որ այս մասին ոեւէ օժանդակութիւն պիտի չկրնան ընել։

Բայց ամենէն տարօրինակն այն է, որ Եղբայրական Օգնութեան Յանձնախումբի անդամներէն պ. Սահակ Մատինեան հրապարակ նետուելով՝ ինքզինք թալանչիներու պաշտպանի դիրքին մէջ դրաւ։ Ասոր գաղտնիքը ինչ էր, յայտնի չէ. միայն այս քանն յայտնի է, որ պ. Մատինեան ինչ ըրաւ ըրաւ, յաջողեցաւ մի կերպ թալանի ապրանքներով ծանրաբեռնած ֆուրգոնները ազատել։

Բարեբաղդաբար այս առթիւ Վանի երկրապահ կամաւորներու հարիւրապետներէն պ. Նազարէթ Պաւռնութեան Վաղարշապատէն Իգդիր վերադարձած ատեն հանդիպեցաւ միևնոյն ֆուրգոններուն, զորս իսկոյն հսկողութեան ներքև առնելով Երևան պիտի տանէր անձամբ, եթէ անհրաժեշտ գործի մը պատճառով չհարկադրուէր ֆուրգոններու հսկողութիւնն ուրիշներու յանձնելով Իգդիր հասնիլ շուտով։ Ֆուրգոնները դեռ Երևան չհասած՝ թալանչիները յաջողած էին ապրանքներէն մաս մը պահել։ Իսկ մնացեալ մասը Երևան հասնելուն պէս Երեւանի կառավարութեան թոյլատրութեամբ բռնուելով վանեցիներէ կազմած վստահելի յանձնախմբի մը միջոցով ապրանքներու մեծ մասն իրենց իսկական տէրերուն յանձնուեցան։ Այս պարագային հետաքրքրական էր տեսնել, թէ ինչպէս շատ մը վանեցի կիներ իրենց ապրանքները անակնկալ կերպով ստացած ըլլալու ուրախութենէն կարտաուէին և կօրհնէին իրենց իրաւունքը պաշտպանելու ծանր պարտականութիւնն ստանձնող մեր կամաւորները։ Սակայն այս պարագային զիս հետաքրքրող գլխաւոր խնդիրը օսէ բանէ առնելի պ. Մատինեանի բռնած դիրքն է, թէ ինչու պ. Սահակ Մատինեան թեր ելաւ այն թալանչիներուն, թէ ինչ կրնար ըլլալ այդ մարդուն շարժառիթը, պէտք է ըսեմ, որ ինծի համար հանելուկ մը եղաւ։

Թղթակից

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

✦ Երէկ բացվեց Քաղաքների Միութեան տեղական կովկասեան կոմիտէների համագումարը՝ Միութեան լիազօր Վիշնեա-կովի նախագահութեամբ։

✦ Հոկտ. 29-ին Թիֆլիսի քաղաքային դումայի դահլիճում տեղի կունենայ մեշչան լիազօրների երդման կարգը, որոնց նահանգապետը հաստատել է իրանց պաշտօնի մէջ առաջիկայ եռամեակի համար։ Այդտեղ որոշվելու է մեշչանների աւագի ռաճիկը և կայանալու է աւագի ու նրա օգնականի ընտրութիւնը եռամեակի պաշտօնի համար։

✦ Պետրոգրադից ինժենէր Լուրէ առաջարկել է քաղաքային վարչութեանը՝ Թիֆլիսում մեխանիքական հացթխարան հաստատել։

✦ Փոխարքայի կարգադրութեամբ, Փոխարքայի դէսանատունը Վրաց Բարեգործական Ընկ. յատկացրել է 25,000 ր. փախստականներին խնամելու համար։

✦ Զինուորական պարգևատրութեան են արժանացել հեռեւեալ հայ զօրականները. Անապի 3-դ ատրճանի շքանշանով և որով ենթ-գնդապետ Միքայել Մելիք-Մուրադեան, Անապի 3-դ ատրճ. բժիշկ Մարտին Խաչատուր-Պողոսեան և 3-դ ատրճ. Սատեփանով պրապորշիկ Սարգիս Բզնունի։

✦ Նոյեմբերի 19-ին Թիֆլիսի դատական պալատում կը սկսվի դատավարութիւնը պետական դաւաճանութեան մի նշանաւոր գործի։

ԿՈՎԿԱՍ

✦ Պետական Դումա է մտցված մի օրինագիծ, որի համաձայն 615,000 բուբլի պէտք է յատկացվի Կովկասի հանքային ջրերին։

✦ Բաքուի զինուորա-շրջանային դատարանը՝ քննելով 13 թուրք աւազակների գործը, որոնք զինված յարձակում էին գործել ստիկանութեան վրա, նրանցից 7-ին դատապարտեց մահվան՝ կախաղանի միջոցով, իսկ 6-ին արդարացրեց։

✦ Սոչիի քաղաքային վարչութիւնը Քաղաքների Միութիւնից խնդրում է 65,000 բուբլի՝ վարակիչ հիւանդութիւնների դէմ կռուելու համար։

✦ Նովոռոսիյսկից հեռագրում են «Рус. Сл.»-ին, որ Փոխարքայի կարգադրութեամբ արգելված է հրեայ-փախստականների յետագայ մուտքը Զերնոմորեան նահանգը։ Այդ նահանգը եկած և նրա սահմաններում տեղաւորված հրէաները, դրանց հետ միասին և նրանք, որոնք ունեն իրաւունք ապրելու որոշված սահմանից դուրս իրանց վճռական և արհեստաւորական հանգամանքով, արտաքսվում են նահանգի սահմաններից։ Զերնոմորեան նահանգում հրէաներին տպրել թոյլատրվում է Փոխարքայի դիւանատնից տրված առանձին վկայականով։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

✦ Լուցկի պատրաստող գործարանատէրերը ֆինանսների մինիստրին խնդրել են աւելացնել լուցկու գները։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ. ՀՐԱՊԱՐԱԿԱՑԻՆ ՆԻՍՏ

Ուրբաթ, ամսիս 23-ին տեղի ունեցաւ Հայոց Ազգագրական Ընկ. հրապարակային նիստը, ուր փիլ. դոկտոր Հայկ Յովհաննիսեանը կարդաց մի դասախօսութիւն՝ «Պատմական տեսութիւն հայ գաղթականութեան մասին» թեմայով։

Քաղաքատնտեսական տեսակէտից մօտենալով խնդրին, պ. դասախօսը մի շարք փաստերով ցոյց տուեց, որ մի երկրի քաղաքական, տնտեսական և մտաւոր օյժն ու առաջադիմութիւնը կախում ունեն նրա ազգաբնակութեան թուից, եթէ, ի հարկէ, այդ երկիրը մի ամբողջական ժողովրդատնտեսութեան պակեր է ներկայացնում, շնորհիւ աշխատանքի բաժանման և իրերի փոխանակութեան։ Մինչդեռ եթէ մի երկրի ազգաբնակութեան տարրերը կազմող առանձին ընտանիքներն ու համայնքները սպառում են միմիայն այն, ինչ որ իրանք են արտադրում իրանց տնտեսութիւնների մէջ, կամ արտադրում են միմիայն այն, ինչ որ իրանք պէտք է սպառեն, չեն կարող ոչ տնտեսապէս, ոչ քաղաքականապէս և ուրեմն ոչ էլ մասաւորապէս առաջադիմել։ Այս առաջադիմութիւնները չեն լինի և այն դէպքում, երբ մի թեկուզ թաւշատ ժողովուրդ ցրված լինի մի չափազանց ընդարձակ երկրում (Սիբիր և Հարաւային Ամերիկա)։ Ի նկատի առնելով մի երկրի մեծութիւնը, բնական հարստութիւնը և ազգաբնակութեան թիւը կարելի է խօսել նրա գերբնակութեան (ժողովրդի չափազանց աճումն) և սակաւաբնակութեան մասին։

Դերաբնակ է մի երկիր, եթէ նրա բնական հարստութիւններն ու կապիտալը չեն բաւականացնում եղած բանւորական օյժերը կատարելապէս շահագործելու և անգործութեան առաջն առնելու (Հնդկաստան, Զինաստան), ընդհակառակը սակաւաբնակ է մի երկիր, եթէ նրա ժողովուրդը չէ բաւականացնում նրա բնական հարստութիւններն ու կապիտալը կատարելապէս շահագործելու։ Ահա այս հանգամանքներն ի նկատի առնելով, թէ նշանաւոր մտածողներն և թէ պետութիւնները սկսած ամենահին դարերից մտածել են իրանց երկրի ազգաբնակութեան և նրանց գոյութեան պայմանները հաւասարակշռել, երբեմն նրանց աճմանը նպաստելով և երբեմն հակազդելով։ Այդ միջոցներից ամենագլխաւորներն են ամուսնութիւնները խրախուսելը կամ կասեցնելն և գաղթականութիւնները։ Իր ասածների համար պ. դասախօսը բազմաթիւ փաստեր բերեց հին յունաց, հռովմայեցոց և ուրիշ ազգերի պատմութիւններից, ապա գերմանական բարեկարգման և 30-ամեայ պատերազմների շրջանից, մերկանտիլիստական շրջանից։

Յետոյ՝ անցաւ գաղթականութիւնների պատճառներին և տեսակներին։ Նրանք առհասարակ քաղաքական, հասարակական և տնտեսական բնոյթ են կրում։ Լինում են ներքին, ներգաղթ եւ արտագաղթ—քոնի եւ կամաւոր, մշտական եւ ժամանակաւոր։ Սրանցից ամենից վնասակարը մշտական արտագաղթն է։

Այս բոլորն էլ պատմական հարուստ փաստերով լուսաբանելուց յետոյ, պ. դասախօսն անցաւ հայկական գաղթականութիւններին։ Պատճառները թէև ընդհանուր առմամբ նոյնն են, բայց հայ գաղթականութիւնները ունեն մի առանձին, սպեցիֆիկ բնոյթ, որ նման չէ ուրիշներին։ Այստեղ գերակշռող են բռնի գաղթերը։ Հնագոյն շրջանների համար նա փաստեր բերեց յունական դասական հեղինակներից, իսկ Սասանեան տիրապետութիւնից յետոյ՝ հայ պատմիչներից։ Նա թուեց պատմական այն պայմանները ու քաղաքականութիւնները, որոնք Սասանեանց, յունաց, արաբների տիրապետութիւնների ժամանակ ստեղծվել են Հայաստանում և առիթ տուել Հայաստանից Դ-ԺԱ դարերում խոշոր գաղթերի դէպի աշխարհիս չորս կողմերը։ Ապա աւելի խոշոր հատուածների գաղթելը Բագրատունեաց անկումից և մոնղոլների արշաւանքներից յետոյ դէպի Վոլգայի ափերը, Ղրիմ, Լեհաստան, Գալիցիա, Բուկովինա, Տրանսիլվանիա. մի ուրիշ հատուածի գաղթը Ռուբինեանց անկումից յետոյ Միջերկրական ծովի վրայով դէպի Բալկաններն ու Ապենինեան թերակղզին, Վենետիկ, Գենուա, ապա նաև Մարսիլիա, Ամստերդամ, Բրիւգէ, Գէնտ և այլն։ Շահաբբասի հանած գաղթը դէպի Պարսկաստան, ապա սրանց տարածվելը դէպի Հնդկաստան։

Թուեց այս բոլոր գաղթավայրերի ծաղկումն ու ապա նրանց ձուլվելը տեղացիների հետ։ Ապա թուեց այս գաղթականութիւնների տուած օգուտներն ու վնասները։ Արտագաղթը—մշտական արտագաղթը հայերի համար անպայման վնասակար է եղել բոլոր դարերում, որովհետև գաղթականները լինում են աւելի ընդունակները, երիտասարդները, մտացիներն և հարուստները։ Եւ եթէ ի նկատի առնենք, որ դրանց տեղն էլ նոցա են գաղթել թուրքերը, թաթարները, տաճիկներն և ուրիշ վայրենի հորդաները, որոնք ոչ միայն կուլտուրապէս շատ ցածր էին կանգնած հայերից, այլև աղքատ, կողոպտիչ ու վայրենի, որոնք ոչ թէ մտածում էին մի երկիր շէնցնելու, այլ աւերելու, պատկերը կատարեալ կը լինի։ Հայոց այս արտագաղթերը ունեցել են և օգուտ, այն էլ միայն սկզբնական շրջաններում, երբ նրանք դեռ յիշողութիւններով մայր հայրենիքից կտրված չէին, այլ շփվելով աւելի բարձր կուլտուրների հետ՝ աշխատում էին նրանց բարիքներից իրանց հայրենիքին էլ մասն հանել։ Այն գաղթավայրերումն են ծնունդ առել հայ պարբերական մամուլը, տպագրութիւնը, միջնակարգ դպրոցների գաղափարն և նոյնիսկ ազգային

վերածնութեան և ազատագրութեան գաղափարները։ Բոլոր արտագաղթերն իրրև ֆիզիքական, ազգագրական միութիւններ մեզ համար կորած են, մնացել են միայն նրանց գործերը։

19-րդ դարու հայ գաղթականութիւնները ամենամեծ չափով Թիւրքիայի և մասնաւորապէս հայկական խնդրի հետ են կապված. սուլթան Աբդիւլ-Համիդի և երիտասարդ-թիւրքերի ձանքերը՝ Հայաստանն և հայկական խնդիրը առանց հայերի թողնելու նկատմամբ—հետեւողական կերպով—մի շարք կոտորածներով, բռնի գաղթերով, ապատիվականացումներով և մանաւանդ ներկայիս անհելի կոտորածով կարծես պսակվում են։ Ապա Հայաստանի ազատված բեկորները խնայելու, գուրգուրելու և ապագայ Հայաստանի քաղաքացիներ պատրաստելու համար՝ արած մի ջերմ կոչով վերջացրեց իր դասախօսութիւնը բուռն ծափերի տակ։ Դասախօսը ընդհանրապէս խօսում էր սահուն, գեղցիկ ոճով։ Ունկնդիրները շատ գոհ հեռացան։ Z.

ՄԱՄՈՒԼ

Վրաց «Թան. Ազբի» լրագրում «Հայկական հարցը» վերնագրով տպված է հետեւեալ առաջնորդող յօդուածը.

Պատերազմի վերջը դեռ չէ երեւում, սակայն Թիւրքահայերի բաղդը օրը չափով վճռվեց։ Համարձակ կերպով կարելի է ասել օր Թիւրքիայում ապրող հայութեան երկու-երրորդը ոչնչացրին և աւերեցին Հայաստանը։ Ներքսայի դեմոկրատիան օրը-օրը է Բելգիայի վիճակի մասին, սակայն ի՞նչ է Բելգիան Հայաստանի հետ համեմատած։ Այնտեղ աւերվեցին քաղաքներ և ընկաւ կուլտուրան, յաղթեց զօրքը. իսկ Հայաստանում ամբողջ ազգը համարեա օչ չացրին ֆիզիքապէս։ Նորագոյն պատմութիւնը նմանը չէ յիշում։ Դեմոկրատիայի համակրանքը ի հարկէ հայ ազգի կողմն է. սակայն սա բաւական չէ։ Մեր պարտականութիւնն է լուսաբանել այն դրութիւնը, որը ամբողջ ազգը ձգեց վերջին ծայր օրերագական վիճակի մէջ։ Սա առաւել ևս կարեւոր է, որ հայ հասարակութիւնը անցել է այս հարցի լուսաբանութեանը։ Դժբաղդաբար հայ ազգի տիրող մասերը փորձում են հարցը մթնոլորտ անել՝ ասելով «ասնու ցեղը լաւ է հէց տանն էլ թողնել»։ Դեմոկրատիան այս ճանապարհով գնալ չէ կարող։ Հարկաւոր է աւելի լոյս տիրել, ապագայում նոր սխալանքից խուսափելու նպատակով։

Թիւրքիայի՝ պատերազմին խառնվելու հետ միաժամանակ առաջ եկաւ հայութեան ազատագրման հարցը։ Սա այսպէս էլ պէտք է լինէր։ Դեմոկրատիայի պարտականութիւնն է՝ օգտվելով ամեն մի ձեռնտու դէպքից, վերացնել ազգային ճորտութիւնը և հիմնել ազատագրութիւն։ Սա ես առաւել տեղին է Հայաստանի վերաբերեալ ասել, որտեղի ընակչութեան կեանքը գտնվում է քիւրդերի ձեռքում։ Ցեռոյ՝ ինչ ճանապարհով կարելի է վճռել Հայաստանի հարցը և դարերի ընթացքում տանջված հայութեան ազատագրումը։

Ճանապարհ գտնելը ստանձնեցին հայ կղերական-բուրժուա դասերը և անցան գործի։

Այստեղ խնդիրը պատկանում է մեր մշտական աշխատակից Ա—նին, որ ռուսերէն լեզուով հետաքրքրական յօդուած հրատարակեց «Современ. Міръ» ի № 8-ում և հարգատութեամբ բնորոշեց այն քաղաքականութիւնը, որ բանեցնում են հայ ազգի «Ազգային Բիւրօն» և նրանց հետեւողները։

Առաջ են բերված ապա Ա—նի յօդուածից կտորներ, որոնց մէջ ասված է ի միջի այլոց, որ բոլոր առաջարկները հայկական հարցի մասին հիմնվում են պրօբլէմատիկ կէտերի վրա և վիճում են դեռ ես կենդանի գազանի կաշին բաժանելու մասին։ Մինքը այստեղ, ըստ Ա—նի, հիմնվում է օչ թէ փաստի կամ ապագայ խաղաղարար կոնֆերենցիայի վրա, այլ ցանկութեան, որի վրա հիմնված են օչ միայն այլ և այլ պրոեկտներ, այլ ազգային որոշ քաղաքականութիւն և գործնական գործելակերպի ամբողջ ձև։ «Սակայն ենթադրենք, թէ գազանը մնաց կենդանի և ցանկութիւնը վերածվեց երևակայութեան։ Ինչ կը ստացվի այն ժամանակ։ Կովկասի «ազատագրական» յոյսը կը խորտակվի, իսկ հայ ազգը Թիւրքիայում այնպիսի վտանգի մէջ կընկնի, որը նրան կը սպառնայ վերացնել երկրագնդի երեսից» և այլն։

Պ. Շիրվանզադէն,—շարունակում է «Թ. Ազբին»,—Ա—ի յօդուածի մասին «Кав. Сл.» լրագրում ասում է։ «Լցվեց բաժակը և հայերը այլևս չէին կարող կարօտ կերպով ստքի չը կանգնել իրանց հալածողների դէմ։ Շիրվանզադէն յենվում է զգացմունքի վրա, սակայն զգացմունքը ինչու է յիշելի այնտեղ, երբ հարցը վերաբերում է ամբողջ ազգի լինել չը լինելուն։ Էլզաս-Լոթարինգիան հեծում է գերման իւնկերական իշխանութեան տակ, Բոսնիա-Հերցեգովինան ասնջվում է աւստրիացիների ձեռքին... քիչ է այնպիսի ազգ... ճորտեր չը լինեն։ Սակայն նրանցից օչ մէկը այս պատերազմի ընթացքում չէ ապստամբվել, չէ հետեւել դիպլոմատիային և իր զօրութիւնը չէ ենթարկել բաղդի բերմունքի։ Ցիշեցեք լեհերի տաքտիկան։ Դեռ այսօր էլ յայտնի չէ օչ օքի, թէ ում կողմն է նրանց համակրանքը և ում դէմ ուղղված նրանց այժը։ Պ. Շիրվանզադէն հայերի դէմ եղած բիպրեսիաները կապում է Թիւրքիայ դեսպոտիզմի հետ։ Սա ճշմարտութիւն է։ Սակայն չէ՞ որ նոյնպէս վարվեցին ֆրանսացիք և անգլիացիք Հնդկաստանի յեղափոխութիւնը ճնշելու ժամանակ։ Ով գիտէ, որքան մարդկանց կեանքից զրկեցին... պատերազմը զինուորական դիրքատուրայի ժամանակաշրջան է... Պատերազմի բաղդը փոփոխական է։ Ուր տէրիտորիան ձեռքից-ձեռք է անցնում, ժամանակաւոր օկուպացիան որևէ անկիւնի վերջնական ազատում չէ նշանակում։ Եւ ահա երբ նախկին տէրը նորից երևան կը գայ այսպիսի տէրիտորիայի վրա, նա ընակչութիւնից վրէժ կառնէ և երկիրը կը մատնի սրի ու հրի։

Սա քիչ է։ Ասենք թէ Թիւրքիան վերջնականապէս յաղթվեց։ Ով գիտէ, ինչ կասի խաղաղութեան կոնֆերէնցիան։ Կարելի է այժմեան հակառակորդ պետութիւնները հաշվին, իսկ ժամանակաւորապէս ձեռք բերված տէրիտորիան թողնեն նախկին տիրոջը։ Պետութիւնների յարաբերութիւնը փոփոխական է։ Երէկվայ հակառակորդները այսօր միանում են իրար, իսկ բարեկամներն անցնում հակառակ կողմի բանակը։ Ցիշեցէք Իտալիայի տաքի կանգնելը Աւստրիայի դէմ...

ԹՈՒՐՔԱՑ «ԵՆԻ-ԻՂԲԱԼ» ԹԵՐԹԸ ՄԵԾ ԻՇԽԱՆ ՓՈԽԱՐՔԱՑԻ ԳԱԼՈՒ ՄԱՍԻՆ

—

Կովկասը ընակված է տարբեր ցեղերով և ժողովուրդներով։ Անցեալներում, երբ մեր երկիրը վերջնականապէս չէր կարելի միացած համարել Ռուսաստանին, այստեղ նշանակված կառավարիչները ղեկավարվում էին մի գլխաւոր նպատակով՝ աւարտել Կովկասի նուաճումը և երկրում վերականգնել կարգ ու հանգստութիւն։ Այժմ ողջ Կովկասը, չնորհիւ այդ անձանց բեղմնաւոր գործունէութեան, ինչպէս Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայևիչի, դարձաւ կայսրութեան անքաժան մասը, յիշված անձանց բարեացակամ և արդարադատ կառավարութեամբ բաւականին առաջ գնաց կուլտուրայի և առաջադիմութեան ճանապարհով, և այժմ հնարաւորութիւն չը կայ կառավարութեան այն նեղիչ ու ճնշող միջոցների, որ լինում էին գլխաւոր կառավարիչների օրով։ Երկրի բոլոր անօրմալութիւնները վերացած են և այժմ մնում է լուծելու զեմստվոյի ու բարձր կրթարանների հարցը։ Եթէ այդ հարցերը լուծվեն բաւարար մտքով, ապա մեր երկիրը կը սկսի ընթանալ կուլտուրական կեանքի ճանապարհով, ներքին Ռուսաստանի հետ միասին ձեռք-ձեռքի տուած։

Ինչ վերաբերում է առանձին ժողովուրդների իրաւունքներին ու շահերին, մեր ժամանակն արդէն ցոյց է տուել, որ պետութեան օգուտն է այդ իրաւունքների և շահերի բաւարարումը։ Ամեն մի ժողովրդի համար սահմանել ազատութիւն լեզուի, հաւատի և ինքնուրոյնութեան, բարեաւել բոլոր ժողովուրդների իրաւական դրութիւնը, բոլորին համարել մի հայրենիքի որդիք, հնարաւորութիւն տալով նրանց միանալ մի համերաշխ ընտանիքի մէջ։ Այս մտքով կառավարութիւնն արդէն խոստում է արել։ Մենք յոյս ունենք, որ մեզ մօտ էլ, Կովկասում, այդ հարցը իր արժանի լուծումը կը ստանայ։ Ամբողջ Եւրոպան ցնցում են թարկած մեծ պատերազմը մեր ընդհանուր հայրենիք Ռուսաստանին էլ ենթարկեց մեծ փորձութեան։ Այդպիսի փորձութեան ենթարկվեց նա և Կովկասը, որը գտնվում է պատերազմի բեմին մօտ։ Այդ պատերազմը ցոյց տուեց, որ Կովկասում ապրող բոլոր ժողովուրդները, եղբայր ուս ս ժողովրդի հետ հաւասար, լաղդաւոր են, երբ բաղդաւոր է հայրենիքը, և վշտակիր՝ ծանր ապրումների օրերին։ Այդ պատերազմը ցոյց տուեց, որ այդ ժողովուրդները պատրաստ են զոհաբերել իրանց կեանքն ու կայքը, երբէ՛ սի յաղթեն թշնամուն։

Անցեալ փոխարքայութեան ժամանակ, չնորհիւ մի քանի տեղեկութիւնների, որոնք հասել էր կենտրոնական կառավարութեան, Կովկասի մուսուլմանները ենթարկվեցին անտեղի կասկածանքի։ Կովկասի մուսուլմանները, որ այս օրերին կուռում են ռուսների շարքում և պատերազմի դաշտում ցոյց են տուել բարձր հերոսութեան օրինակներ, հանդիսանում են այս սուտ ու անարդար կասկածանքի ապացոյցներ։ Մեր ամբողջ կեանքը, համայն պատերազմի այս օրերին, նոյնպէս ապացոյց է, որ այդ կասկածները չը պէտք է տեղի ունենան։

Այդօրինակ կասկածները վիրաւորական են Կովկասի մուսուլմանների համար, որոնք հեռու են խորամանկութիւնից և երկերեսութիւնից, և ամենքին յայտնի են իրանց ազնուութեամբ և իրանց մտքերի մաքրութեամբ։ Մենք հաւատացած ենք, որ Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայևիչը, իր իմաստութեամբ և արդարութեամբ երկիրը կառավարելու օրով, կը համոզվի, որ մենք վիրաւորանքներ կրել ենք անտեղի կերպով։ Իսկ մենք մեր ամբողջ գործունէութեամբ և աշխատանքով, մեր հայրենիքի բարօրութեան օգտին, ցոյց կը տանք, որ մենք արժանի ենք լաւագոյն վերաբերմունքի և այլ քաղաքականութեան։

ՀԻՒԾՎԱԾՈՒԹԻՒՆ

ու նիհարութիւնը, եթէ առաջացած է թոքախտից, սիֆիլիսից եւ կամ այլ քրոնիկական հիւանդութիւններից, նէվրաստենիան եւ ջղային հիւանդութիւնները, սեռական թուլութիւնը, սրտի հիւանդացումները, զառամութիւնը մեծ աջողութեամբ բժշկում է Սպէրմին-Պէլը, որի մասին վկայում են աշխարհիս ամենայայտնի բժիշկների բազմաթիւ դիտողութիւնները գրականութեան մէջ։

Սպերմին-Պէլը միակ իսկական, բազմակողմանի փորձված Սպէրմինն է. այդ պատճառով էլ պէտք է ուշադրութիւն դարձնել „ՍՊԷՐՄԻՆ-ՊԷԼԻ“ անուան վրա և չը գնել կեղծվածները, հեղուկներ և սերմային գեղձերից պատրաստված մանրամասներ, որպէս անպէտք նմանողութիւններ, որոնք թէ յատկութեամբ և թէ ներգործութեամբ Սպէրմին-Պէլի հետ օչ մի առնչութիւն չունեն և յաճախ պարունակում են առողջութեան համար վնասակար տարրեր։

Ցանկացողներին ուղարկվում է ձրիաբար «Цѣлебное дѣйствіе Спермина» գիրքը. ամբողջ օրգանոտերապիայով հետաքրքրվողներին ուղարկվում է՝ 4 հատ 7-կոպէկանոց նամակադրոշմ ստանալուց յետոյ՝ նոր լոյս տեսած «Цѣлительныя силы организма» գիրքը։

Սպէրմին-Պէլին կայ ամենուրեք։

Профессоръ Д-ръ ПЕЛЬ и С-вья Петроградъ

Մատակարար Նորին Կայսերական Մեծ. Դրան

№ 4 0—8

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 26 հոկտ.

Ուրբաթ, հոկտեմբերի 23-ին, պ. Տիգրան Նազարեանի Սալօնում տեղի ունեցած երեկոյթին ընտրված է մի մանաժողով, որի անդամների մէջ, ինչպէս տեղեկացայ «Մշակ» լրագրից, նշանակված է և իմ անունը։

Սրանով հարկ եմ համարում յայտնել, որ ես բացակայելով այդ երեկոյթին՝ օչ ոքի չեմ տուել իմ համաձայնութիւնը ընտրվել այդ մանաժողովի անդամ և այժմ իսկ զբաղված լինելով իմ անմիջական պարապմունքներով հրաժարվում եմ այդ մանաժողովին անդամակցելուց։

Յովհ. Սպէնդիար

—

Թիֆլիս, 22 հոկտեմբերի

Հանգուցեալ Եկալեանի մահից յետոյ առաջին անգամ ես առիթ ունեցայ Քամոյեան եկեղեցում լսել պատրաստված խմբի ներդաշնակ երգեցողութիւն։ Դժբաղդաբար նշանաւոր երաժշտագէտի մահից յետոյ շատ քչերը հետեւեցին նրան և հայ եկեղեցիները շարունակեցին հայ հասարակութեանը եկեղեցական արարողութիւնների և պատարագի ժամանակ կերակրել անհերդաշնակ երգեցողութեամբ։

Գովելի է Քամոյեան եկեղեցու հոգաբարձութեան նախաձեռնութիւնը՝ ունենալ լաւ պատրաստված խումբ։ Պէտք է խստօրէն նշել, որ գործը զանվում է հմուտ ձեռքում և պ. Դ. Միրզայանը իր պատրաստած խմբով ժամաւորներին պատճառում է հոգեկան մեծ բաւականութիւն։ Երգեցողութիւնը ունի մարդկային բարքերը ազնուացնող նշանակութիւն, և ցանկալի է, որ մեր միւս եկեղեցիները օրինակ վերցնէին և հասարակութեանը եկեղեցական արարողութեան ժամանակ տային ներդաշնակ երգեցողութիւն։

Խումբը երկսեռ է և բաղկացած է գլխաւորապէս Քամոյեան դպրոցի աշակերտուհիներից։ Միսկան

Խմբագիր-հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ԿՈՂՄՆԱԿԻ ՀԱՂՈՐԴԱԳԻՐ

ՆՂԲԱՑՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ ԹԻՒՐՔԱՀԱՅ ԵՒ ՊԱՐՍԿԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ԿԻԼԻՔԻ ՀԱՅ ԱԶԳՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

—

Եղբարք Թուրշեանները 100 ր., Քոսեան, Սահակեան, Էրիշեան միասին՝ 100 ր., Ա. Տիգրանեան, Պ. Ազարեան, Պարոյր-Ղուկաս, Ռ. Պարոնվարդեան, Գ. Եսայեան և Բ. Թէվէքելեան 25 ական ր., Գրիգոր Արտեմովիչ 15 ր., Մ. Էրիշեան, Ս. Գարագաշեան, Մ. Ուսմիկեան, Յ. Խոդիկեան, Եղբ. Սերոբեաններ, Մ. Ճիվճիվեան, Ա. Լաչինեան, Կ. Մուլքեանեան և Գ. Ղուլբաթեան 10-ական ր., Գ. Դերձակեան, Ի. Դերձակեան, Կ. Գելչոնիչեան, Ա. Գելչոնիչեան, Մ. Քեշիշեան, Ս. Կարապետեան, Ա. Գրիգորեան, Բ. Սիմոնեան, Մ. Մկրտչեան, Փ. Սահակեան, Ս. Փիրանեան, Ե. Յակոբեան, Ա, Այվազեան, Գ. Այվազեան, Օնիկեան, Յ. Թումանեան, Ա. Ղազարեան, Յ. Տէր-Անտոնեան, Մ. Թաթոսեան, Գ. Քանանեան, Կ. Յովհաննեան, Վ. Ռուբեան, Գ. Սիճանեան և Ե. Ղիասալէթ Մնացականեան՝ 5-ական ր., Գ. Մաղչեան, Գ. Տէր Գողոսեան, Լ. Աստուածատրեան, Ռ. Դաւթեան, Յ. Թ. և Վարվուռէ Մանուչարեան 3-ական ր., Մ. Զամանեան, Տ. Սեղանեան և Յ. Տէր-Անտոնեան 2 ական ր.։ Ս. Տէր-Գողոսեան 1 ր.։ Գումարն է 600 ր.։

Գումարը հոկտեմբերի 8-ին փոխադրված է Էջմիածին։ Խորէն ք. Մնացականեան

Կ ի է վ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Թիֆլիսի ժամերով)

—

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝

№ 3 դէպի Բաթում 1 ժ. 45 ր. ցերեկ.
№ 4 » Բագու 7 ժ. 3 ր. երեկ.
№ 6 (արագ) » 12 ժ. 8 ր. ցերեկ.
№ 9 » Բաթում 8 ժ. 53 ր. երեկ.
» Զուլֆա 8 ժ. 53 ր. երեկ.
» Բօրժոմ 3 ժ. 20 ր. ցերեկ

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝

№ 3 Բագուից — 12 ժ. 54 ր. ցերեկ.
№ 4 Բաթումից — 5 ժ. 55 ր. երեկ.
№ 5 Բագուից (արագ) 7 ժ. 41 ր. երեկ.
№ 10 Բաթումից — 9 ժ. 51 ր. առաւ.
Զուլֆայից — 8 ժ. 11 ր. առաւ.
Բօրժոմից — 7 ժ. 25 ր. առաւ.

ԱՒԱՏԱՐՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բժշկ. Բ. Ղաւասարդեանի

Հիմնված 1880 թ.

(Գուկիա, Զօրանոցի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

«606»-ի եւ «914»-ի ներսրսկում բժշկական խորհրդակցումներամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ս. ՆԱՒՍԱՐԴԵԱՆ—11—12½ ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։

Բ. Դ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—9½—3 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծախկահաս.։

Մ. Մ. ԲԵՆԻԱՄՈՎԻՉ—11—12 ժ. ականջի կոկորդի և քթի հիւանդութ.։

Ա. Գ. ԳՈՐՇԵՊՏԵԱՆ—12—1 ժ. երեք., հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։

ԿԻՆ-ԲԺԻՇԿ. ՏԻՐ-ԳՈՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵՔՇԱԲԹԻ

Մ. Մ. ԲԵՆԻԱՄՈՎԻՉ—6—7 ժ.

Գնաբը 50 կ.։ Հրաւէրները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ Բ. Նաւասարդեան

1. 0—181

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ЗАПОРЪ

КАТАРРЪ ЖЕЛУДКА

ГЕМОРОЙ

ИЗЛѢЧИВАЕТЪ РАДИКАЛЬНО, ИСКЛЮЧИТЕЛЬНО

Пилюли „КАТАГЕМО“

М·ДЕЛАМУРЕ.

ПРОДАЖА ВЪ ЛУЧШИХЪ АПТЕКАХЪ И ВЪ АПТЕКАРСКИХЪ СКЛАДАХЪ.

ИСКЛЮЧИТЕЛЬНЫЙ СКЛАДЪ ДЛЯ ВСЕГО КАВКАЗА

ЛАБОРАТОРІЯ М-ДЕЛАМУРЕ ТИФЛИСЪ

ЭРИВАНСКАЯ ПЛ. ПУШКИНСКАЯ 3.

ВЕРХНІЙ ЭТАЖЪ

762. 50—2 (Հ. ա.)

ТРВОЛИМ Է ՎԱՐՁՈՎ

ՄԻ ՍԵՆԵԱԿ

վաճառքով և լուսաւորութեամբ, հայ ինտելիգենտ ընտանիքում։ Ամսական 20 ռուբլի։ Հասցէ՝ Орловская, № 8.

778. 2—1

ՄԱՐԴ!

Դու փառք ես որոնում, բայց չես հասնում նրան.

Մէկը՝ առանց կոպէկի մեծ գործ է սկսում և առաջ գնում. միւսը նախանձում է նրան, իր ծննդեան օրն ու ժամը անիծում, ճակատագրից գանգատվում։ Այն ինչ՝ բաղդը, ճակատագիրը դեր չունեն այդտեղ։

Զատերը կան, որ դեռ չեն ըմբռնում իրանց անաջողութիւնների իսկական պատճառները, չը գիտեն, որ դրանք թաղված են քարայված օրգանիզմի և ջղային հիւանդութիւնների մէջ։ Ջղային հիւանդութիւնը գլխաւորապէս առաջ է գալիս գլխի ուղեղի և ողնաշարի անկանոնութիւնից և հիւթի ու փոսֆորի շատ կորցնելուց։

Ջղային հիւանդութիւնները զանազան տեսակի են. օր. գլխացաւ, ցնցումներ, մէջքի, ողնաշարի, երեսի, կոկորդի, սրտի, ձեռքի ոսկորների ցաւ, անքնութիւն, ծանր երազներ, երբեմն աչքերի խաւարում, դող, անհանգստութիւն, օրգանական թուլութիւն, մոռացկոտութիւն, վախ, արբեցողութիւն, բարկացկոտութիւն, նիհարութիւն և այլն։

Դրանց բուժելու երկու ճանապարհ կայ. 1) Անպատման հանգստութիւն, մտաւոր և ֆիզիքական աշխատանքներից առ ժամանակ խուսափել,—մի բան, որ դժուար է ներկայ ջղային դարում, երբ ամեն վայրկեան ցնցող դէպքերն են յաջորդում միմեանց։

Մնում է երկրորդ միջոցը՝ սննդարար հիւթեր ընդունելը։ Իսկ այժմ ամենալաւ հիւթը ՖՈՍՖՈՐՆ է։

Պարիզի յայտնի բժիշկ Դլէզին երկար աշխատանքից և փորձերից յետոյ աջողվել է պատրաստել միակ դեղը, որը պարունակում է իր մէջ մեծ քանակութեամբ ֆոսֆոր. այդ դեղը կոչվում է Ստիմուլոլ, որը վերականգնում է կորցրած երիտասարդութիւնը, առողջութիւնը և ընդհանուր ջղայնութիւնը և թուլութիւնը. արտասահմանի և Ռուսաստանի յայտնի պրոֆեսորները, բժիշկները և հիւանդները ուրախ են իրանց գովասանքը և շնորհակալութիւնը և այժմ զարազան սանատորիաներում և հիւանդանոցներում բժշկում են հիւանդներին Պարիզի յայտնի բժիշկ Դլէզի հանճարեղ դեղով՝ Ստիմուլոլով... Ինչ ինչ են գրում Ստիմուլոլի բժշկութեան մասին բժիշկները.

Յարգելի բժիշկ։ Ուրախութեամբ յայտնում եմ, որ Ստիմուլոլ պրեպարատը տալիս է զարմանալի արդիւնք։ Ստիմուլոլ պրեպարատը հանճարեղ գիւտ է, նա ընդունելու համար շատ դեղեցիկ կերպով բաժանված է և ամբողջ սրտով աջողութիւն եմ ցանկանում նրանց։

Իմ հիւանդների սեռական ջղայնութեան ամենածանր դէպքերը ես բժշկում եմ Ստիմուլոլով։ Հիւանդութեան թեթև դէպքերում Ստիմուլոլի ազդեցութիւնը նկատվում է 2—3 շաբաթից յետոյ, իսկ ջղային հիւանդութիւնների դժուար դէպքերում՝ 3—4 շաբաթից յետոյ։

Աչքի առաջ ունենալով պրեպարատի կատարելագործութիւնը մի քանի դէպքերում, ես այն յանձնարարել եմ հիւանդին նոյնիսկ ոչ նրա նեղկացութիւնը, ցոյց տալով նրան դեղատոմսից օգտվելու հնչա ձեր։

Սեռական անկարողութեամբ բռնված հիւանդները Ստիմուլոլով աջողութեամբ կարող են օգտվել առանց բժշկի գիտատոմսի, որ առանձնապէս ձեռնտու է, աչքի առաջ ունենալով այն կեղծ ոմօթխածութիւնը, որ զգում են հիւանդները։

Սեղմում եմ ձեր ձեռքը՝ Պրոֆ. Մ. Լեկուար։

Իսկական Ստիմուլոլը պատրաստվում է Ֆրանսիայում (Պարիզում), ամեն մի արկղը ունի գործարանի գրշմը՝ Institut „D-r Calvet Paris“. մի տուփը բաւական է, որ դուք զգաք նրա հրաշալի գործողութիւնը եւ դուք կը սեանամ մեր ուզած եռանդը եւ առողջութիւնը. դեղերի հետ ուղարկվում է բոլոր եւրոպական և Ռուսաստանի պրոֆեսորների, բժիշկների, հիւանդների գովասանքները և շնորհակալական նամակները։

Պատուէրները, փողը և նամակները ուղարկել՝ Тифлисское отдѣленіе Института доктора Кальве, Тифлисъ, Эриванск. площ., Пушкинская 3, верхній этажъ, отд. 11. (Խնդրում հասցէն գրել լրիւ, ինչպէս որ առաջին գրված է։ Մէկ տուփը արժէ 7 ռուբ., ճամպարհածախսով և վճարելիք վճարով 50 կոպ. ուրիշ արժէ։ Ով ուղարկի 7 ր. փողը առաջուց լիովին, ճանապարհածախս չի վճարում։

Վերադիր վճարով ուղարկվում է միայն 2 ր. 50 կ. կանխավճար ստանալուց յետոյ։

Դլխաւոր պահեստ ամբողջ Անդրկովկասի համար— Интернаціональное медико-фармацевтическое депо, Тифлисъ, Эриванск. пл., № 3.

(Հ.) 609. 10—7

Մի տիկին

ցանկանում է ընտանիքներում

ԴԱՍԵՐ ՈՒՆԵՆԱԼ

Հայոց լեզուից փոքր երեխաների հետ կամ դասատարակչուհու պաշտօն։

Араратская ул. № 2, Варвара Теръ-Макарянъ.

771. 2—1

НОВОЕ ИЗОБРѢТЕНІЕ ВЪ АМЕРИКѢ.

Въ столицѣ новаго міра Нью-Іоркѣ М. Деламуремъ изобретено самое радикальное средство „Рапидъ“ для полнаго излеченія остраго и хроническаго Триппера (Гонорреи)

Въ настоящее время въ лучшихъ клиникахъ и сенаторіяхъ цивилизованныхъ странъ Америки и Европы для излеченія Триппера (Гонорреи) какъ остраго такъ и самаго застарѣлаго хроническаго, извѣстные врачи, профессора и спеціалисты примѣняютъ составъ „Рапидъ“ изобретенный М. Деламуремъ. „Рапидъ“ - разрѣшенъ Россійскимъ Главнымъ Медицинскимъ Управленіемъ за № 1295.

Курсъ леченія при самыхъ застарѣлыхъ случаяхъ три недѣли. два двойныхъ флакона и коробка пилюль. прилагается способъ употребленія на всѣхъ мѣстныхъ языкахъ. Каждый больной можетъ у себя дома лечиться безъ посторонней помощи, въ тайнѣ. Цѣна за одинъ флаконъ 5 руб. полный курсъ леченія 2 двойныхъ флакона и коробка пилюль 9 руб. въ провинцію меньше двухъ флаконовъ не высылается Налож. плат. высылается только по полученіи задатка 3 руб.

Избѣгайте недоброкачественныхъ и вредныхъ для здоровья поддѣлокъ и подражаній.

Исключительный складъ для всего Кавказа, въ Кавказкомъ отдѣленіи Московской Лабораторіи М. Деламуре, Тифлисъ, Эриванская площадь Пушкинская 3. д. Кредитнаго О-ва верхній этажъ.

Всѣмъ лазаретамъ, госпиталямъ аптекамъ и аптекарскимъ складамъ отпускается со скидкой. не менѣе 5 коробокъ.

(Հ.) 50—7

Թիֆլիսի Նաւարդիւնաբերական Ընկերութեան Վարչութիւնը

սրանով պատիւ ունի հրաւիրել պ. պ. բաժնեէրներին

ԱՐՏԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

օրը կայանալու է 1915 թի նոյեմբերի 8-ին, կիրակի օրը, առաւօտեան ժամը 11-ին Ընկերութեան գրասենեակում, Սօլոլակայա փողոց, տուն Արաքելովի, № 9.

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆ ԿԸ ԼԻՆԻ

Վարչութեան առաջարկութիւնը՝ Ընկերութեան պատկանող գոյքը և Բագու—Թիֆլիսեան Նաւթարդիւնաբերական և Առևտրական Ակցիոներական Ընկերութեան ակցիաների վաճառելը։

Եթէ ժողովը սահմանված ձայների քանակութեան բացակայութեան պատճառով չէ կայանայ, երկրորդ անգամ նշանակվում է նոյն տեղը, նոյեմբերի 11-ին, չորեքշաբթի օրը երեկոյեան ժամը 7½-ին, օրը կը համարվի կայացած, ի նկատի չառնելով ձայների քանակութիւնը (§ 29)։ (Հ. 3, 7) 777. 3—1

Ծախվում է ԵՐԵՒԱՆՈՒՄ

ՏՊԱՐԱՆ

7 բէալ մօտ 60 կասսաներով և լի զանազան, աւելի քան 160 տեսակ տառերով և բազմազան պարագաներով։ Կայ մի փոքրիկ արագատիպ լաւ պահված, կարճոն և թանգ կարող մեքենայ, ինչպէս և զանազան կազմարարական գործիքներ։ Գինն է 6000 ռուբլի։

Դիմել՝ Эривань, Эмину Теръ-Григорянцу. (Հ.) 772. 4—1

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.